



Հեռ.՝ 077-33-76-90

Հասցե՝ Գորիսի պետական
համալսարան,
Գիտական կենտրոն

ՆՈՒՀ - Ի ՏՆՕՐԵՆՆԵՐԻ

ՎԵՐԱՊՈՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՏԱԵԹԱՑ

E-mail՝ dinuntsas@gmail.com

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երաշխավորությամբ (ՀՀ ԿԳՄՍ նախարարի 16.06.2022 թ., թիվ 1150-Ա/2 հրաման) «Գորիսի պետական համալսարան» ՊՈԱԿ-ը կազմակերպում է **վերապատրաստման դասընթաց նախադպրոցական ուսումնական հաստատության տնօրենի ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալ ցանկացողների համար:**

Դասընթացը կազմակերպվում է Գորիսի պետական համալսարանում (ք. Գորիս, Ավանգարդ 2, հեռ.՝ 077-33-76-90):

Վերապատրաստման դասընթացին կարող է մասնակցել այն անձը, ով ունի բարձրագույն կրթություն, վերջին տասը տարվա ընթացքում մանկավարժական աշխատանքի կամ հանրային կառավարման ոլորտի առնվազն հինգ տարվա ընդհանուր աշխատանքային ստաժ:

Վերապատրաստմանը մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել.

- 1) դիմում՝ Գորիսի պետական համալսարանի ռեկտորի անունով (Ձև 1, լրացվում է տեղում),
- 2) 3x4 չափի երկու լուսանկար,
- 3) բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը կամ տեսաներածված տարբերակը,
- 4) աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ (առկայության դեպքում),
- 5) անձը հաստատող փաստաթղթի պատճենը կամ տեսաներածված տարբերակը,
- 6) Գորիսի պետական համալսարանի 900288000012 հաշվեհամարին փոխանցված գումարի անդորրագիրը կամ դրա տեսաներածված տարբերակը:

Փաստաթղթերի պատճենները ներկայացվում են բնօրինակների հետ միասին: Պատճենների իսկությունը ստուգելուց և սքանավորելուց հետո բնօրինակները վերադարձվում են:

Վերապատրաստման դասընթացի արժեքը **65 000 (վաթսուներեք հազար)** ՀՀ դրամ է, ներառյալ մասնակիցներին տրամադրվող բաշխիչ նյութերը (առցանց թեստերը և դասընթացի նյութերը կունենան 24/7 հասանելիություն և կապված կլինեն մասնակիցների էլեկտրոնային հասցեներին):

Դասընթացն իրականացվում է համակցված (առկա և հեռավար/առցանց) ուսուցման կազմակերպման ձևերով՝ 100 ժամ ծանրաբեռնվածությամբ, որը ներառում է ՀՀ ԿԳՄՍՆ կողմից հաստատված թեստավորման թեմաների բովանդակությանը և հարցաշարին համապատասխան իրավական, կառավարչական, մանկավարժական, հոգեբանական նոր գիտելիքների, կարողությունների, հմտությունների և ունակությունների ձևավորմանն ու կատարելագործմանն ուղղված բաղադրիչներ:

Վերապատրաստման դասընթացը հաջողությամբ ավարտած հավակնորդին տրվում է վկայագիր, որը նրան իրավունք է տալիս մեկ տարվա ընթացքում մասնակցելու նախադպրոցական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր) ստանալու քննություններին:

Դասընթացը վարում են ոլորտի փորձառու մասնագետներ:

Դիմումներն ընդունվում են 2022 թվականի հունիսի 23-ից մինչև հուլիսի 14-ը ներառյալ՝ Գորիսի պետական համալսարանում (Գիտական կենտրոն, հեռ.՝ 077-33-76-90, ամեն օր (բացի շաբաթ և կիրակի օրերից)՝ ժամը 10.00-ից 16.00-ն:

Վերապատրաստման դասընթացը սկսվում է հուլիսի 19-ից՝ 17 օր տևողությամբ: Հավակնորդների ցանկությամբ դասընթացի կազմակերպման ժամանակացույցը կարող է համաձայնեցվել:

Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ստանալ.

Բջջ.՝ 077-33-76-90 (համակարգող՝ Ա. Դինունց)

E-mail՝ dinuntsas@gmail.com

Fb՝ <https://www.facebook.com/ԳՊՀ-Վերապատրաստումներ-Training-Courses>

Հասցե՝ ՀՀ, ք. Գորիս, Ավանգարդ 2 (Գորիսի պետական համալսարան, 1-ին մասնաշենք, 1-ին հարկ, Գիտական կենտրոն):

Միրով և պատասխանատվությամբ սպասում ենք:

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ